# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների քարտերի սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԳՀԾՁԲ-24/56 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հունվարի 9-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-24/56 ծածկագրով պայմանագրում 2025 թվականի հունվարի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի և «Ավտոքարտ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2025 թվականի հունվարի 13-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ծառայության դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2025 թվականի հունվարի 13-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝**2025 թվականի հունվարի 9-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-24/56 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ծառայության մատուցման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման համար «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸի 2025 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ**